Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից, ՀՀ ԱԺ աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների մատուցման նպատակով, կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19 — 20 հունվարի 2022թ.
ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Հարությունյան, Հ.Միսակյան, Ս.Սարգսյան, Ա.Էալայան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Սաղաթելյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Գնման հայտով սահմանված գնվելիք ծառայության գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)*
1	աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	564000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 18.01.2022 թ.-ին ժամը 10:30-ին:

էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 19.01.2022 թ.-ին ժամը 10:30-ին:

3. Հայտ ներկայացրած մասնակցի տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը

Հ/հ	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	Կապի միջոցը
1	«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ	ՀՀ, ք.Երևան, Կիևյան -8	055 54-74-20

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-22/5 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	Մասնակից	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/		
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ	450000	20%	540000	450000	20%	540000

Աճուրդն ամփոփվել է 19.01.2022թ. և Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ը:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթեր / հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացրած հայտը /հայտում առկա փաստաթղթեր/, արձանագրեց՝

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ /Հավելված 1/ Մասնակցի ղեկավարի պաշտոնը բացակայում է, ղեկավարի անունը անհրաժեշտ է ներկայացնել բացված (լիարժեք):
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի՝ /Հավելված 1.2/ 3-րդ բաժնի 3.1 ենթաբաժնի, 3.1.3 կետի՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում պետության կամ համայնքի մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտությամբ բացակայում է: Հայտարարագրի 4-րդ բաժնի 4.5 ենթաբաժնի ա) կետի ու 4.5.2՝ Մասնակցության տեսակի նշումներն բացակայում են, կատարված է նշումը գ. կետում, սակայն գ. կետում կատարվում է նշում, եթե առկա չէ <ա> կետի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ: Հայտարարագրի լրացման կարգի 7-րդ կետի համաձայն հայտարարագիրը ստորագրում է հայտը ներկայացնող անձը, որը բացակայում է:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-22/5 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց 20.01.2022թ-ին նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 24.01.2022թ. ժամը 10:30-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Թորոսյան

անդամներ՝ _____ Վարդուհի Հարությունյան

_____ Հայարփի Միսակյան

_____ Սարգիս Սարգսյան

_____ Անժելա Լալայան

քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան